

զՏըրդատ տարան ի Ֆռանկիստան,
 Նոքա դըրին ուխտ և դաշինք,
 Երկու եղբայրք անուանեցան,
 Ելան զնացին յերուսաղէմ,
 Որ նորոգեն ըզԳողգոթան .
 Տըրդատ շինեց զսուրբ Ծընունդն,
 Կոստանդիանոս զսուրբ Գերեզմանն .
 Շինեցին, կատարեցին,
 Լըցաւ աշխարհըն քրիստոնեայ,
 Երկոտասան ազգ խաչապաշտ,
 Քրիստոս Աստուած տաւնեցին .
 Լուսաւորիչ խընդիրք արաւ,
 Գերեզմանէն լոյսն որ եկաւ,
 Ճառագայթեց ի խոռ կանթեղն,
 Հայ ազգն ամէնն ուրախացաւ —
 Թագէոս ասաց զայսքան բաներն,
 Աչօք տեսեր ըզԳողգոթան,
 Զամենեքեանդ ուրախ պահէ,
 Արժան առնէ իւր տեսութեանն» :

(Հայրենիք Ամսագիր, Սեպտ. 1935)

